

### Ակնարկ

## ՄԵՐԸ

1880 թիվն էր: Մուշը աշուն էր հագել, մայիս էր ու երկինքն առատ մանուշաքար էր պարզելով ժողովրդին: Օհանջանի տոհմը, որ հաճախ անմիաբանությամբ էր բոցվում, կանոնադրվ փոխել փիճակը, Կոպ բաղաբից էր հարս ուզել իր որդուն: Ոսկերիչների լավագույն վարպետն էր, հարուստ ու առատաձեռն, ճոխ հարսանիք էր ձեռնարկել, յոթն օրվա: Ընդամենը ու բարեկամները բազմաթիվ էին: Հյուրերից բացի նա հարևան գյուղերի թուրք ու քուրդ ցեղերին էլ բաժին էր հանել իր «անասնամորթերից ու եփ ու թափից»: Եվ ահա յոթերորդ օրն էր լրանում: Կես գիշերին Մշո լռած գուռնայի ծայնը պիտի քաղցր մեղեդիների ու պարելանակների ձայնով լցներ հինավուրց պատմական քաղաքը:



Գ ի շ ե թ ու ամատ ձյուն էր եկել, որը հազվադեպ է լինում գարնանամուտին: Առավոտյան վաղ՝ աքրորակ անջից առաջ, Օհանջանը դուրս ելավ բակ, վաղորդյան աղոթքն արեց ու հանկարծ տեսավ - իր դռն առջևից 3 մարդկային ոտնահետքեր - ձգվում են միջև դիմացի շինություն, ուր 3 հարթամահա մարդիկ կանգնած նայում են իր կողմը. անմիջապես դուրս կանչեց որդուն և ասաց՝

- Լաո, իդա հետքերով գնա, ունա 3 Աստուղ ուղարկած «դռնխներուն» հրավիրե, իգան, մըր ուրախությանը մասնակցին:

Որդին՝ Արամը, շտապեց, հասավ, ասաց,- բարի լուսի Աստված ձգի երկար կյանք իդա, հերս ձեգի հրավիրեց մեր ուրախությանը մասնակցելու:

- Մենք 3 հոգի ենք, 3 զորության տեր, իմ մեկ ընկերը գանձատեր է, մյուսը՝ առողջության, իսկ ես Սերն են: Գնա՛, քու հորն ասա, ո՞ր մեկիս պիտի կանչե: Արամը արագ հետ դարձավ, կրկնեց հյուրերի հայտնությունը: Լորսհարսը, որ արդեն կէտ տարի կողքին էր, արագ մոտեցավ նշանածին ու ականջին ասաց,- «Սերը կանչե, Սերը»:

Արամը կրկին հասավ անձանթներին և, Չեզանից ո՞րն է Սերը, թող նա հետևի ինձ: Երեքից վերջին կանգնածն առաջացավ և քայլեց փեսայի հետևից: Երբ դարձավ, տեսավ, երեքն էլ եկել են իր հետևից: Դեռ ինքը չխոսած՝ հետևից եկողը ասաց,- մենք երեքս էլ նպատակային ենք եկել: Դու եթե կանչեիր գանձատիրոջը՝ նա մենակ կգար, առողջությունը՝ նույնպես, իսկ երբ Սերը կանչեցիր, ապա մենք պարտավոր ենք Սիրով կառուցված տանը ամեն ինչով ապահովել, որ երջանկությունը թագավորի:

Այլապես գանձով ու առողջությամբ ոչինչ չի ստացվի:

- Ուրեմն դուք Աստուծո ծառաներն եք, - հարցրեց Օհանջանը:

- Այո, - ասացին նրանք և երեքը ներս մտան, յուրաքանչյուրը մի բաժակ վերցրեց,- ասաց, կարևորը Սերն է և իր դերակատարունը, մնացածը ստեղծվում են կյանքի ընթացքում: Եվ յուրաքանչյուրը մի թալիսման են նվիրում հարսնացուին: Եվ դեռ շնորհակալություն չստացած՝ անհետանում են: Հարսն ու փեսան ժպտում են, իսկ Օհանջանն ու կինը՝ հրձվում...

... Մինչև 1910 թ. վարպետի տոհմն ըստ թալիսմանների աստվածածին գործությամբ պահպանվեց ու ծաղկեց: Դեռ ավելին, հասկացրեց, որ վտանգ է մոտենում, պետք է խուսափել, հեռանալ...

Հրանտ Սարգսյան



## УРОК 20 ԴԱՍ 20

### Имя числительное Количественные числительные

Количественные числительные в армянском языке, как и в русском, делятся на простые, сложные и составные.

1. Простыми являются числительные:

- от 1 до 10
- 1 – մեկ
- 2 – երկու
- 3 – երեք
- 4 – չորս
- 5 – հինգ
- 6 – վեց
- 7 – յոթ
- 8 – ութ
- 9 – ինն, ինը
- 10 – տաս
- десятки и 100, 1000, 1000000
- 20 – քսան
- 30 – երեսուն
- 40 – քառասուն
- 50 – հիսուն
- 60 – վաթսուն
- 70 – յոթանասուն
- 80 – ութսուն
- 90 – իննսուն
- 100 – հարյուր
- 1000 – հազար
- 1000 000 – միլիոն

2. Сложными являются числительные от 11 до 99, за исключением названий десятков. Они образуются по модели: десяток + единица:

- տաս(ն) + մեկ = տասնմեկ
- одинадцать
- տաս(ն) + երկու = տասներկու
- двенадцать
- քսան + մեկ = քսանմեկ
- двадцать один
- հիսուն + մեկ = հիսունմեկ
- пятьдесят один
- ութսուն + մեկ = ութսունմեկ
- восемьдесят один

Обратите внимание, что, начиная с 21, армянские сложные числительные соответствуют русским составным.

Вспомните, что в слове при скоплении трех и более согласных между этими согласными произносится звук [ы], потому что таснмեկ произносится [таснымэк], տասնչորս – [таснычорс] и т. д.

3. Составными являются числительные свыше ста. Они образуются сочетанием сотен, десятков, единиц; тысяч, сотен, десятков, единиц и т. д.

101 – հարյուր մեկ, 112 – հարյուր տասներկու, 150 – հարյուր հիսուն ... 200 - երկու հարյուր, 9999 – ինը հազար ինը հարյուր իննսուհինգ...

Как правило, количественные числительные ставятся перед существительными и не согласуются с ними в падеже и числе, например:

Հինգ օր ես գտնվում էի Մոսկվայում: Я пять дней находился в Москве.

Հինգ օրից ես վերադարձա երևան: Через пять дней я возвратился в Ереван.

Այդ աշխատանքը ես կատարեցի հինգ օրում: Эту работу я выполнил за пять дней.

В отличие от русского, в армянском языке существительное при числительном обычно ставится в ед. ч., ср. վեց մատիտ шесть карандашей տաս ուսանող десять студентов տասներկու օր քսանմեկ քսանմեկ օր քսանմեկ հարյուր տարի քսանմեկ հարյուր տարի сто лет

Прочитайте и перепишите следующие количественные числительные:

- 1 – մեկ, 9 – ինը, 12 – տասներկու, 23 – քսաներեք,

45 – քառասուհինգ, 82 – ութսուներկու, 96 – իննսուվեց, 121 – հարյուր քսան մեկ, 262 – երկու հարյուր վաթսուներկու, 1905 – հազար ինը հարյուր հինգ:

### Порядковые числительные

Ես ապրում եմ բարձրահարկ շենքի ութերորդ հարկում: Я живу на восьмом этаже высотного здания.

Մրցութային մեջ նա գրավեց երրորդ տեղը: В соревнованиях он занял третье место.

Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը ապրել և ստեղծագործել է տասնիններորդ դարի առաջին կեսին: Великий армянский просветитель Хачатур Абовян жил и творил в первой половине девятнадцатого века.

Порядковые числительные образуются от количественных числительных при помощи суффиксов -րորդ и -երորդ, за исключением числительного, которому соответствует порядковое числительное первый.

Порядковые числительные от երկու, երեք и չորս образуются при помощи суффикса -րորդ:

երկու - երկրորդ второй երեք - երրորդ третий չորս - չորրորդ четвертый

Порядковые числительные от 5 и далее без исключения образуются посредством прибавления к соответствующим количественным числительным суффикса -երորդ: հինգ - հինգերորդ пятый տասնմեկ - տասնմեկերորդ одиннадцатый հարյուր - հարյուրերորդ сотый

Порядковые числительные, как и количественные, ставятся перед существительными и не согласуются с ними в числе и падеже, например:

Իմ տղան սովորում է առաջին դասարանում: Мой сын учится в первом классе.

Նա առաջին դասարանից գերազանցիկ է: Он с первого класса отличник.

Դպրոցի առաջին դասարաններում սովորում են երկու հարյուր աշակերտներ: В первых классах школы учатся двести учеников.

Порядковые числительные тоже могут принимать определенный артикль ր и употребляться в роли существительного. В этом случае они склоняются и имеют форму множественного числа, например:

առաջինը - առաջինները первый – первые Նա առաջիններից մեկն է: Он один из первых.

Պատվիրակության մեջ պիտի մտնեն երեք հոգի: Երրորդի հարցը դեռ չի որոշվել: В состав делегации должны войти три человека. Вопрос третьего еще не решен.

### Прочитайте следующие предложения и сравните с русскими:

Ես նստած էի առաջին շարքում: Я сидел в первом ряду.

Երկրորդ օրը երեկոյան գնացինք համերգ: На второй день вечером мы пошли на концерт.

Հայկական այբուբենը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Армянский алфавит создал Месроп Маштоц в V веке.

Уважаемые читатели! Уже год, как мы через газету учим с вами армянский язык. Те знания, которые вы получили, уже достаточны для чтения и разговорной речи. Мы надеемся, что уроки были полезны.

Курс ведет Армине ВСЕПЯН

## ԻՆՆ ԵՐԱՆԻՆԵՐ

### Ե. «Երանի~ ողորմածներին, քանզի նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. Ե 7)



Հոգևոր կյանքի մեջ հատկապես պետք է զգուշանալ կեղծիքից, ինչը խստորեն դատապարտվեց Տիրոջ կողմից: Մեկը կարող է իր անձնական կյանքի մեջ հասնել որոշակի մաքրության, շատ աղոթել, պահք պահել և այլն, սակայն ներքուստ կեղծիքի մեջ հայտնվել, հոգու խորքում սեփական փառքը փնտրել և դատել մարդկանց: Այսպիսի մարդու «հոգևոր հաջողությունները» ոչ մի արժեք չունեն Տիրոջ առաջ: Կա մի առաքինություն, որի ճշմարիտ իրագործումը մարդուն գերծ է պահում հոգևոր շեղումներից: Ողորմությունը ցույց է տալիս, թե մարդ ուր է հասել իր հոգևոր կյանքում, որքան է սիրում մարդկանց և որքան է պատրաստ ինքնագոհողության հանուն Քրիստոսի, որ իր անասնաման մարդասիրությամբ չարչարվեց և խաչվեց մեր մեղքերի համար: Դրա համար է ասում Տերը. «Ոչ թե զոհ եմ կանոնում, այլ ողորմություն» (Մատթ. Թ 13):

Ըստ եկեղեցու հայրերի՝ ոչ մի առաքինություն մեզ այնքան աստվածաման չի դարձնում, որքան ողորմությունը: Տերն Ինքն է ասում. «Նմանվե՛ք

ծեր երկնավոր Հորը, որ ծագեցնում է արեգակը չարերի ու բարիների վրա և անձրև բերում արդարների ու մեղավորների վրա» (Մատթ. Ե 45): Մտքը զիրքը շատ տեղերում Աստուծո անվանում է ողորմած: Ուստի ողորմած մարդն Աստուծո պատկերն է երկրի վրա, որի համար մարդիկ փառալուծում են երկնավոր Հորը: Եվ երբ մարդ ողորմություն է անում, Աստուծոն է տալիս «Որովհետև Իմ այս եղբայրներից մեկին արեցիք, Ինձ արեցիք» (Մատթ. Ի Ե 40):

Ողորմությունն է ոչ միայն մարմնավոր գոհողությունը՝ քաղցածների կերակրելը, կարոտայինների կարիքները հոգավել, հիվանդներին խնամելը, գերիների ազատելը և այլն, այլ նաև հոգևոր ողորմությունը, քանզի հոգին շատ ավելի մեծ է, քան մարմինը: Հոգևոր ողորմություն են՝ հանցավորներին ներելը, մեղավորներին դարձի բերելը, ճշմարտությունն ուսուցանելը, մարդկանց համար աղոթելը, սեփական անձի դեմ գործած անիրավություններին համբերելը և այլն: Ողորմությունը ծնվում է սիրուց, ողորմության գործերը սիրո գործեր են: Իսկ սիրո

առաջին նշանը զոհողության հոգին է. երբ մեկը պատրաստ է իր ունեցած հոգևոր և մարմնավոր բարիքները զոհել հանուն դիմացինի՝ նրա մարմնավոր կարիքները հոգավել և առավել ևս նրա հավատական փրկության համար: Ողորմության համար ամենակարևորը սիրո և ողորմության ոգին է և ոչ թե քանակը, ինչպես ցույց է տալիս այրի կնոջ լուծայի պատմությունը: Այս պատմությունը նաև վկայում է այն մասին, որ քո արած ողորմությունը պետք է զգալի գոհողություն լինի քո ունեցածի համեմատությամբ, ոչ թե աննշան մի նվեր, որի ավելի կամ պակաս լինելը քեզ համար ոչ մի նշանակություն չունի:

Սակայն պետք է զգուշությամբ և ծանուկ կատարել ողորմությունը՝ ըստ Ավետարանի. ոչ թե մարդկանցից փառք որսալու, զովեստների արժանանալու և մեծարելու, այլ Աստուծո փառքի համար: Ով այս աշխարհում մարդկանցից վարձք է ստացել, նա վարձատրություն չի ստանա Տիրոջից հավիտենական կյանքում:

«Փանձաարք» աստվածաբանական կենտրոն